



Հեքիաթները խելոք են միշտ,
Թեկուզ խառն են և՛ սուր, և՛ ճիշտ.
Սուրը խելքի մաղով մաղե՛ք,
Ճշտից խրա՛յր ու խե՛ղք քաղե՛ք:

Մուրեն Մուրադյան





Չիպուլինոյի արկածները

ՈՐՏԵՂ ՉԻՊՈՒԼՈՆԵՆ ՏՐՈՐՈՄ Է ԻՇԽԱՆ ԼԻՄՈՆԻ ՈՏՔԸ

Չիպուլինոն Չիպուլոնեի տղան էր: Նա յոթ եղբայր ուներ՝ Չիպուլետտոն, Չիպուլոչչան, Չիպուլուչչան, և այսպես մինչև վերջ՝ ամենահարմար անունները սոխի ընտանիքի համար: Պետք է ուղղակի ասել, որ նրանք լավ մարդիկ էին, միայն թե կյանքում բախտները չէր բերում: Ի՞նչ կարող էս անել, որտեղ սոխ կա, այնտեղ էլ՝ արցունք:

Եվ ահա մի անգամ խեղճ Չիպուլոնեն պատահմամբ տրորեց երկրի տեր ու տիրական իշխան Լիմոնի ոտքը, որի համար նրան անվանեցին խռովարար և բանտ նետեցին:

Ծերուկ Չիպուլոնեին դատապարտեցին ցմահ բանտարկության: Չիպուլինոն հազիվ կարողացավ տեսակցություն խնդրել և հանդիպել հորը:

– Իմ խեղճ հայրիկ, քեզ գողերի ու ավազակների հետ զնդան են գցել:

– Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում, որդյակ, – քնքշորեն ընդհատեց նրան հայրը, – ախր բանտերը լեփ-լեցուն են ազնիվ մարդկանցով. կարգին մարդիկ իշխան Լիմոնի սրտով չեն: Բանտերը կառուցվել են նրանց համար, ովքեր գողություն են անում և մարդ սպանում, սակայն իշխան Լիմոնի օրոք ամեն ինչ հակառակն է. գողերն ու մարդասպանները նրա պալատում են, իսկ բանտերում ազնիվ մարդիկ են նստած:

– Ես էլ եմ ուզում ազնիվ մարդ լինել, – հայտարարեց Չիպուլինոն, – սակայն քանո նստել չեմ ուզում:

– Չիպուլինո, հիմա դու արդեն մեծ ես, – հրաժեշտ տալով որդուն՝ ասաց Չիպուլոնեն,- գնա աշխարհ տես, և կյանքը քեզ ամեն ինչ կտվորեցնի: Միայն թե աչքերդ լա՛յն բաց արա, աշխատի՛ր ամեն տեսակի խաբեբաներին ու խարդախներին լավ ուսումնասիրել, հատկապես նրանց, ովքեր իշխանություն ունեն:

– Հայրիկ, մի քիչ համբերի՛ր, ես կվերադառնամ և բոլորիդ կազատեմ: Այ կտեսնե՛ս, ես իմ ասածը անպայման կանեմ...

Այսպես Չիպուլինոն իր ունեցած-չունեցածը մի կապոց արեց, հրաժեշտ տվեց իր ընտանիքին և ճանապարհ ընկավ...

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՉԻՊՈՒԼԻՆՈՆ ՍՏԻՊԵՅ, ՈՐ ՊՈՍԵԳՈՐԸ ԼԱՅ ԼԻՆԻ

Քավոր Դդումն իր տան կառուցումը մեկ օր առաջ էր ավարտել: Գրեթե մանուկ հասակից նա երազում էր սեփական տուն ունենալու մասին և ամեն տարի մեկական աղյուս էր կարողանում գնել իր տան համար: Եվ ահա տունը պատրաստ էր: Ճիշտ է, այն շատ փոքր էր ստացվել, որովհետև աղյուսները քիչ էին, բայց նա գոհ էր ու երջանիկ, որովհետև իրականացել էր իր երազանքը: Այս մասին էր Չիպուլինոյին պատմում քավոր Դդումը, երբ գյուղի ծայրին փոշու թանձր ամպ բարձրացավ: Գյուղում բոլոր դռներն ու պատուհանները ճռճոռոցով ու շրխկոցով փակվեցին, կարծես փոթորիկ էր սպասվում:

Չիպուլինոն դեռ գլխի չէր ընկել, թե ի՛նչ է կատարվում, երբ փոշու ամպը դողդյունով անցավ գյուղի միջով և կանգ առավ ճիշտ քավոր Դդումի տան մոտ:

Փոշու անալի միջից հայտնվեց մի կառք, որին լծված էին չորս ձի: Ճիշտն ասած, դրանք այնքան էլ ձիեր չէին, այլ վարունգներ, քանի որ այն երկրում, որտեղ տեղի էր ունենում այս ամենը, բոլոր մարդիկ և կենդանիները ազգակից էին որևէ մրգի կամ բանջարեղենի:

Փնչացնելով՝ կառքից դուրս եկավ ամբողջովին կանաչ հագած մի գեր մարդ: Թվում էր՝ նրա փափլիկ, ուռած կարմիր այտերը ուր որ է հասած լոլիկի նման կայայթեն: Դա Պոմիդորն էր՝ կոմսուիի Բալերի կառավարիչը: Չիպոլինոն իսկույն գլխի ընկավ, որ նրանից լավ բան չի կարելի սպասել, և ճիշտ համարեց մի կողմ քաշվել:

Սկզբում սինյոր Պոմիդորը ուշադիր զննում էր քավոր Դդումին ու նրա տունը: Հետո հանկարծ այնպես կատաղի մռնչաց, որ հարևան տների դռներն ու պատուհաններն ավելի ամուր փակվեցին.

– Չարագործ, ավագակ, գո՛ղ,– գոռում էր սինյոր Պոմիդորը,– դու այս պալատը կառուցել ես կոմսուիի Բալերին պատկանող հողի վրա:

– Ձե՛րդ ողորմություն,– աղերսեց քավոր Դդումը,– հավատացնում եմ, որ տուն կառուցելու բույլտվությունը ժամանակին ինձ տվել է կոմս Բալը:

– Բայց կոմս Բալը հիմա մեռած է, և դու իրավունք չունես այստեղ տուն կառուցելու: Դո՛ւրս կորիր այստեղից:

– Խաբեբա՛, խարդախ,– լավեց ինչ-որ մեկի ձայնը:

– Այդ ո՞վ է խոսում, ո՞վ,– կատաղած մռնչաց սինյոր Պոմիդորը:– Սպասեցե՛ք, ձեր հե՛քթն էլ կգա, կտեսնե՛նք, թե ո՞վ է վերջում ծիծաղելու:

– Քո հեքթն ավելի՛ շուտ կգա, սինյոր Պոմիդոր, դու շուտով կպայթես,– վրաբերեց Չիպոլինոն:

– Իսկ դո՞ւ որտեղից հայտնվեցիր, ինչո՞ւ աշխատանքի չես: